

ՊԱՏԿԵՐ

ՀԱՆԴԷՍ ԿԻՍԱՍՍԵԱՅ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ, ԹԻԻ 3

15 Մայիս 1891



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՍԻՍ

ՏՊԱՐԱՆ

ՃԻՎԵԼԵԿԵԱՆ

1891

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



1. **ՆՈՐ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԼԵՒՈՆԻ ԺԳ.Ի** Գործաւորաց վիճակին վրայ: — Գեորգ Վ. Թերշտրուշեան:
2. **ԱՐՁԱԳԱՆՔ ՀԱՄԱԺՈՂՈՎՈՅՆ ՍԱՐԱԿՈՍԱՅ**: — Յովհաննէս Վ. Բալաբեան:
3. **ԱՐՇԱԼՈՅՍ**: — ԿԱՐԱՊԵՏ Ա. ՈՍԿԵԱՆ
4. **ՇՈՒՐՋ ՉՄԱՅԻՍԻՒ**: — Մ. Վ. Ո:
5. **ԷՐՆԷՍԹ ՀԱՎԷՑԻ** «Ուսմանը մարգարից այժմեանու-րեան վրայ» անուն գիրքը: — Յ. Վ. Բ:
6. **ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ Այրի կին մի ի գերեզմանատան Բե-րայի**: — Թորգո՛. Կո՛նյան Ա. Ոսկեան:

Պ Ա Տ Կ Ե Ր

Հ Ա Ն Դ Է Ս Կ Ի Ս Ա Մ Ս Ե Ա Յ

Երկրորդ Տարի

ԹԻՒ 3

45 Մայիս 1894

Ն Ո Ր Շ Ր Ջ Ա Ք Ե Ր Ա Կ Ա Ն

Լ Ե Ի Ո Ն Ի Ժ Գ . Ի

Գործաշորաց վիճակին վրայ



Վատիկանի ութնամեայ վեհախառ Շերունին չգաղարիք դեռ իւր Առաքելական երկնաւոր Պաշտօնն ի գործ դնելէն . այնքան ամաց բեռը չկրեց դեռ այն կորովը , եւ հասակին ձրմեռը չստեղծեց դեռ այն հուրը : Նա իւր զողջոջուն ձեռներով կը գրկէ դեռ ողորմելի մարդկութիւնը . Նորա խորշումեալ ճակտէն կը սլանան վեհ խորհուրդք . Նովաւ կ'աջակցին մտաց եւ կրօնից զիւցազունք , կ'ողջունեն զիրար Պղատոն եւ Աւգոստինոս , Արիստոտելէս եւ Թովմաս : Վատիկանու պալատէն կ'արձակէ Նա գրեթէ ամեն տարի նոր Շրջաբերականաց սքանչելիքներ , որք կ'երթան ի չորս ծագս երկրի՝ կորզելու համար զրուատիք եւ հաւանութիւն յամենատուխ լանջերէ իող , ինչպէս ժամանակաւ Կապիտոլեան արծիւն թեւատարած կ'ընդգրկէր տիեզերքը : Սակայն եւ այնպէս նմանելով մարդկութեան Փրկչին , այս մեծ Մարդը միանգամայն մարդասէր հովիւ է , եւ իր

ամեն գործն կը հայի առ այս պաշտօն , զոր կը նկատէ Նախը-
րեւ պատճառ իւր գոյութեան . ուստի նայնչափ իւր մտազրու-
թիւնը կը գրաւէ զօրութիւն , փառք եւ ճոխութիւն , որչափ ա-
պիկարութիւն , մտապօնք եւ կարօտութիւն : Գործաւորաց վի-
ճակին վրայ արուած այս նոր շրջաբերականն , որոյ թարգմա-
նութիւնը մտադիր եմք զնեղ ի Հանդիսիս , այս վեհ նկարագրին
Գլուխ-Գործոցն է :

Դար մը առաջ , 1791ին , Ֆրանսական յեղափոխութիւնը
վերջնական կերպով կը ջնջէր այն ընկերութիւններն (էսթաթ) ,
որք հին ընկերական կարգապահութեան հիմունքն էին : Հիմայ ,
1891ին , Լեւոն Ժ.Գ. կը հրատարակէ նոր անստեղծական սահմա-
նադրութիւն , երբ Մանչէսթըրի վարչապետութեամբք հիմնեալ
ձեռագիրտական գրութիւնն եւ յօրինուածութիւնը զէլ յիւր կոր-
ծանուածը կը դիմէ : Գաղղիական յեղափոխութիւնը հին գործա-
բանական (organique) վարչութեան տեղ մուծած էր անհատա-
կանութիւնը : Անսահման մրցակցութիւնն , աշխատութեան ա-
զատութիւնն , զրամադլիտց առաւելակշռութիւնը , մեքենայի
զահակալութիւնը ծնունդ տուին «Չորրորդ կարգի» (*) , որով նաեւ
«ԸՆԿԵՐԱԿԱՆ ԽՆԴՐՈՅՆ» չարիք մը՝ որ անդու կը կրծէ մարդ-
կային ընկերութիւնը : Մայիսի առաջին օրն , իւր սպառնալիք-
ներով , զէմ առ զէմ ձակատեցոյց երկու կազմակերպիչ ու
թշնամի զօրութիւնները . մէկ կողմէն , այժմեան վարչութիւնն՝
իւր բանակաւ եւ ոստիկաններով . միւս կողմէն , գործաւորա-
կան ընկերավարութիւնը (Socialisme) իւր գասակներովն եւ ա-
տելութեամբք : Մարդկութիւնն ո՛չ երբեք այսպիսի ահաւոր վը-
տանդի մը զիմաց գտնուած էր : Հոովմայեցեոց պատմութեան
մէջ նշանաւոր դերեաց աստամբութիւնն պատահական արիւած
մի էր : Բաբելոն ինջոյից մէջ դերեցաւ : Կը պատմուի որ երբ
Պարսիկք Անախը քաղաքը յարձակմամբ առին Վաղերիանոս
Կայսեր օրով , բոլոր ժողովուրդն ի թէսարսն համախմբուած էր :
Այն թէսարսնին նստարանները՝ զքաղաք պաշտպանող պատնի-
շապատ զժուարամառչելի լեռան ստարտը փորուած էին : Ամեն
աչք զէլ առ դերատանն ոչուցեալ էին . ամեն ականջք առ նա
ուղղեալ , երբ նա կը սկսի յանկարծուտ թոթովելու , ձեռուր-
ները կը կծկին , բազուկները կը դօսանան , աչուրնեքն անթար-
թափ կը յառին կը սեւեռին : Իւր գտնուած տեսարանին վրայէն

(*) «Quatrième Etat», հակադրութեամբ առ «Tiers Etat» .

տեսած էր որ յաղթական Պարսիկը արդէն տիրած ըլլալով պարսիստներուն, լեռն ի վայր ձեռքնիմաց կ'արշաւէին :

Եւ միթէ յար եւ նման չէ՞ր կացութիւնն : Մեր տախտակ երկիր սատանեցաւ, եւ Բնկերվարական Յեղափոխութիւնն, ինչպէս գուշակած էր Լատալ, եկաւ բախել մեր դռները : Եւ որ աւելի փոանդաւոր է, միջազգային ընկերվարութիւնը մտադիր կը թուի ակնկալելու մինչեւ այն օրն՝ յորում ընկերական միճակին բնածին ճնշումն յեշխանութիւն պիտի կոչէ (Նոր տէրերը) : Պարտեցաւ 1848ին եւ 1870ին, եւ սորվեցաւ համբերել, սորվեցաւ երկայնամտել : Պարազլուեիներն չին ուղեր այլ եւս նոր միջպակներ գործել . զի համոզուած են թէ պիտի գայ օր մը, յորում բանտին եւ հեծեղազօրն անբաւական պիտի ըլլան ի տակաւ աւաջի յաղթական ընկերվարութեան : Այս ժպիրն անպատկառութիւն, այս յանդուգն եւ վտառ յանձնապատասխանութիւն, ո՞չ սարքէն մեր ժամանակին յուզիչ եւ զարնուրեցուցիչ երեւոյթներն են : Ո՞ւր է այդ վրիւթութիւնն, ո՞ւր պիտի դանուի խաղաղարար մը . ո՞վ պիտի տայ մարդկութեան այն յանկալի լանպին, որ բանայ նոր աշխարհ մը երջանկութեան, առանց անցնելու զդրդմանց եւ անհնարին աղէտից դժոխքէն :

Լեւոն Ժ.Գ. ընտրեց այս ճակատագրական զարնուրելի ժամ մը, ընկերական Աւետարանը ախոյեաններուն սորվեցնելու համար : Մի միայն Քահանայապետական իշխանութիւնը յտանի կեցած է մարդկան փոշուոյն մէջ իբր պնդակազմ, անկասկած, լուսառատ եւ անվեհեր միջազգային զօրութիւն եւ ճոխութիւն մը, որ մարդկութեան տառապանաց ժամուն մէջ կարենայ փորձ մ'ընել ի դուռի հանելու համար այս արհաւիրացի գործը : Նա միայն անխռով ակամբ կը հայի ընկերութեան արագային վրայ, նա կը մնայ իտէականի հետամուտ, հակառակ ամենայն յուսախաբութեանց եւ պատրանաց . նա կը մնայ միշտ լաւատես, հակառակ ամենայն մարդկային անթիւ սրկատութեանց եւ անկմանց : Լեւոն Ժ.Գ. ինչպէս որ իւր «Անմահ» սկոռզ կոնգակաւր քաղաքապետական-կրօնական կարգի մէջ քարոզած էր հաշտութեան օրինադիրքը, նոյնպէս տնտեսադիտական կարգի մէջ ընկերական ներդաշնակութեանց սահմանազրութիւնը կը հրատարակէ :

Այս գիւրդ ժամու պատեհութիւնը պատկազարդ է Աւետարանական փառապանծ ախարով : Անտեթեւեթ՝ բայց գորովալից այն էջերու մէջ, կը զգաս Յիսուսի Աստուածային անու-

չահոտութիւնը , Եկեղեցւոյ Հարց անաչառ խրատներն , Միջին դարուն հաւատարակչիւ եւ ողջամիտ ժողովրդական վարդապետութիւնները . անդ կը չնչեւ աղքատին սէրը , որ քրիստոնէութեան արածուեալ յատկութիւնն է : Առաջին անգամն ըլլալով, անտեսական գիտութիւնն կը խանդաղառի , արիարար եւ ընդարձակօրէն , ի չնորհս «Նոր խաւերու» , առանց գրողութեան յատկութիւն , առանց սաղբանայ ի վտարանջութիւն , յարգելով ո՞ր եւ է իրաւունք , քարոզելով ո՞ր եւ է պարտիք . որով այդ Շրջաբերականն կը լինի այս Քահանայապետութեան ամենաչքեղ յիշատակարանն , ընկերական նոր կարգին տեսակ մը կամարակապ սինազարգ զահլիճը : Եկեղեցւոյ մէջ միայն հաւատարակչութիւնն անեղծ կը պահպանուի եւ անարատ : Շրջաբերականին ներքին հանգամանք ու նկարագիրը կը կայանայ զլիաւորաբար ո՞չ թէ արդարութեան եւ սիրոյ վարդապետութեանց վրայ , այլ աստուածային աւանդին՝ մարդկային ընկերութեան ներկայ կայութեան անթերի յարմարութեան վրայ , պատմական իրողութեանց յաւիտենական սկզբանց հետ պարզ եւ բեղմնաւոր ներդաշնակութեանը վրայ : Ս. Յովհան Ոսկերեւան , Ս. Հերմիմոս եւ Պօսիւէ հնար է մարդկային ասացուածոց շքեղաշուք պերճութիւնը նուիրած ըլլան Քրիստոսի տաղաբերոյն եւ աղքատին , սական Լեւոն Ժ.Գ. առաջին վարդապետն է որ անտեսական գիտութեան խնկամանին մէջ զբաւաւտարանական այս անոյշ բոցը :

Թօրնթօն կը նմանցունէ ընկերութիւնը բուրգի մը , որոյ խարխիւն են աշխատաւոր գատակարգերը : Ինական չէ՞ ուրեմն որ արդարութիւնն պաշտպան կանոնի շինուածոյն այս նեցուկներուն համար . ինչո՞ւ զարմանալ , եթէ Լեւոն Ժ.Գ. զարթուցանէ կառավարութեանց փոյթն ու հոգատարութիւնը անոնց համար , զորս ճշօրէն կ'անուանէ « Սինկոր » (Proletaires) : Եւ իւր չրթունքներէն չիջնար ասելութեան կամ արհամարհանաց եւ ոչ մի բառ . անոր վարդապետութեանը մէջ ամբողջ քրիստոնէական աւանդութիւնը մարմին կը զգենու : Շրջաբերականը կարդացած պահուն , մարդուս ոպին կ'ողջունէ անցողաբար Եկեղեցւոյ նորոգիչ ազդեցութիւնն աշխարհիւ վրայ : Կ'ողջունէ մեծախառ գմբէթներն այն հռչակաւոր մենաստանաց , ուր կրօնաւորը կը լինէին կարուակ , թափիչ , հիւսն , երկրագործ , ձեռաց աշխատութիւնը մտաւորական խոհերու եւ սաղմոսաց նուապին հետ խառնելով : Կը սքանչանայ աշխատութեան լուսածածանչ շատագո-

վութեան վրայ, զոր հիւսած է մէն մի այն Հռովմայեցի տիկնանց՝ որք՝ չնչեալք ի վերուստ, ինքնակալաց սպարանքներէն կ'անցնէին ի գեանադամբանս, ուր կը ստոժէին աննչան մարտիրոսի մը վերքերը, ուր կը զբաղէին իրենց ձեռք հիւսելու կողովներ, փսխաթներ եւ կարելու խոշոր եւ անպաճոյճ զղեսոսներ: Կ'ելլէ կը հասնի մինչեւ ցառաքեալս, որք իրենց ձեռաց աշխատանքէն կը խնդրէին իրենց օրատահիկը. մտածութիւնն, հիացեալ եւ շնորհակալու, վանական կարգաց անընդհատ շարայարութեան մէջէն, զբաղպեան կենաց խտակրօն լուծեամբը այսօր իսկ հողը մշակող միանձունքներէն կը վերանայ մինչեւ ցհւան Նազարէթի, որուն օրինակը գործաւորին համար արդիւնաւորած է քրիստոնեայ ազնուականութեան արտօնազիրը, որ զանիկաց կը փառադարձին առաջի մարդկան եւ Աստուծոյ: Միթէ չըզարթուցաներ Լեւոն ԺԳ. բոլոր այս յիշատակները, նախանձախնդիր սինդրորին պատշաճելով յախտնական վարպետութիւնները:

Բայց եկեղեցին միայն ժողովուրդ չէ. նա ընտրեալ եւս է: Աւետարանականութիւնը զարգարութիւնն չմերժեր: Լեւոն ԺԳ. գորովագութ է իրբեւ զմայր, եւ միանգամայն անզգաց որպէս անգամահատ, արդար իրբեւ պատաւոր, գողտր եւ խանդակաթինչպէս մանուկ մը: Նա կը սիրէ եռանդազին այս խեղճ մարդկութիւնն որ յաճախ կոյր է, այո՛, բայց եւ յաճախադոյն իր պարազլութիւններէն մասնուած: Նովա՛ զեւ այսօր Քահանայապետութիւնն ղերեւոյթն կ'առնու բազմերան վայրաց (Empyrée), ուր կը շիջանին ամեն մաքառմունք, ամեն ոխ եւ քէն, ուր կը կատարուին ամենայն հաշտութիւնք: Այս է յիրաւի Շրջարեւրականին փառաւոր նկարագիրը, ակնյայտնի առաջի դնել եւ քարոզել զբամազլխոյն եւ աշխատանքին ներդաշնակութիւնը, տէրերուն գործաւորաց հետ հաշտութիւնը. զսէր ընդ արդարութեան, զյարգութիւն ամենայն իրաւանց եւ զկատարուն ամենայն պարտուց, եւ ընկերութեան գործարանաւոր մարմինը կազմող լւրաքանչիւր անհատին սեպհական գործն եւ պարտաւորութիւն: Կը ստեղծէ գերագոյն մթնոլորտ մը խաղաղութեան, ուր նախկին սոսիսներն կը ճանչնան իրօք թէ լոկ աշխատակից են եզեր միմեանց. կը բանաց մեծ «Քաւութեան» (amnistie զարազլուիլը, յորում ձեռագրիտական յառաջադիմութեան կրկէսին մէջ միմեանց ընդդէմ մարտնչողներն, կ'աշխատին մօտ առ մօտ եւ ձեռն ի ձեռն:

Շրջաբերականին առաջին մասը , որ անտեսական կարգին երկու գործիչներուն յարաբերութեանցը սքանչելի մեկնաբանութիւն մի է , կը ցուցնէ , ըստ բանից Տ. Կարմիրէի , թէ աշխատութեան եւ դրամադրոյ միաբան համաձայնութիւնը , քաղաքադիտական անտեսութեան ամենապեղեցիկ եւ ամենէն մըխիթարական օրէնքներէն մին է : Ինչպէս Աստուածն Գրոյն Յովբայ , որ «Առնէ խաղաղութիւն ի բարձունս» , Լեւոն ժ.Գ. իւր բնակած բարձունց գազաթէն կ'իջեցնէ : Անտամանին խաղաղաբար չունչը : Ինչ որ այլուր կը հերձէ կը պառակտէ , անոր գաղափարին մէջ ներդաշնակութեան սկզբունք կ'ըլլայ :

Հաւատարակչութիւնը գտնելու այս արուեստը իւր ծագումն ունի Քահանայապետին բովանդակիչ հանձարին մէջ : Լեւոն ժ.Գ. չգիտեր արտաքրտականութիւնն (exclusivisme) , որ ընկերային կարգն անջատեալ մասերու եւ խորչերու կը բաժնէ եւ անտեսական զաչտին վրայ անջրպետներ եւ միջնորմներ կը կանգնէ : Նա անթերի է եւ կատարեալ . իւր տիրող յասկութիւնն է տարածութիւն եւ ծաւալումն . իւր ուղին ընդգրկած է բովանդակութիւնը , պիտաւոր խնդրոյն ամեն բարձրութիւնները : Տնտեսադէտներն ու գարոյք տո՛ւպ կը բաժնեն ինչ որ միացեալ պէտք է ըլլայ . մէկը ամեն ինչ Պետութիւնէն կ'ակընկալէ , միւսն ի բարձունց գալիք ապարթիւթեան միայն հաւատ կ'ընծայէ . այլը ընկերութեանց կրտ անհատական նախաձեռնութեանց կը զխմեն : Իսկ Լեւոն ժ.Գ. գերազանցաբար ներդաշնակ ընտելիւն , յիշեցնելով հնոց «սիմֆոնիալ հոգի» (symphonialis anima) , միահաղայն կը խմէ այս գործիչներն , եւ ամենքն ի միասին գործակից կ'ընէ ի բարին : Նկեղեցին , Պետութիւնն , առանձնական գործունէութիւն , համալստ ընել՝ բոլոր ընկերութիւնը պարտ չունի միթէ լիաձեւն արեւոյն իւր ընտիր ընտիր դոյքն ի գործ հաշտութեան . հարկ իսկ ըլլար մեծաւ մեծ գոհողութիւններ ընել , պէտք չէ՞ միթէ ձեպել փութալ առ առաւել տա՛հնադէտն , եւ վերկէլ նաւն որ արդ արդ կը սուզանի :

Այս ներդաշնակութիւնն ու ընդարձակութիւն Շրջաբերականին իրաւարարութեան նկարագիր մը կու տան , որով եւ կ'ըլլայ այն՝ սեռակ մը զինազաղար Ատուծոյ (Trève de Dieu) :

Անտի է այն արտասուլը զիւրութիւնն , որով Քահանայապետն առ ոչինչ կը գրէ լայնածաւալ աշխարհիս անթիւ խոջն եւ խութ : Եւ յիրաւի , քանի՛ վասնզներ , ներքին զժուարութիւնք , արտաքին զժուարութիւնք , նիւթոյն շփոթութիւնը ,

քաղաքապետական անստուծեան շարունակ վտիտխուժիւնը , որ հազիւ թոյլ կու տայ վարդապետութիւններ եւ սկզբունք յորինելու ձեւելու , կրից եւ մրցանաց պայքար եւ կռիւ , այս ամեն արգելից հանդիպեցաւ Լեւոն ԺԳ. իւր ճամբուն վրայ : Եթէ մէկը մտածէ ընկերական ինդրոյն նկատմամբ եղած հըրտատարակութեանց վրայ , պիտի համոզուի թէ այս Երջարեւակոն կ'ենթադրէ ծանօթութեանց եւ նախադի հատորներ :

Լեւոն ԺԳ. դերձաւ այս ժպտերէն իւր սքանչելի ձեռնհասութեամբ եւ վէճին քաջ խնդամտութեամբն , այն իւր մեծ արուեստովն , որով բազմակուտակ տեսութիւններէն եւ զխառածներէն կ'ընարէ կը զատէ ընդհանուր սկզբունքներն եւ պատմական միջավայրին յանկաւոր պարմանները : Նա տեսական ուսուցիչ է միանգամայն եւ փորձառական վարդապետ , լուսաւորիչ եւ հաշտարար . յեցեալ՝ աստ յԱւետարանն եւ ի Սուրբն Թովմաս , անդ՝ յանբաւ արդի գործսնոցն , ուր միմեանց կը հանդիպին մարդիկ եւ ենթադրութիւնք : Մեծ Պապ մը միայն կ'ընար կազմել այս ատլասը եւ կերպաւորել այս համադրութիւնը (synthèse) : Սակայն Լեւոն ԺԳ. այն տիեզերաց մէջ կը պահէ իւր լուսապայծառ յոտակութիւնը , իւր ջինջ պարզութիւնը , այն զիւրութիւնը կ'ըսեմ , որ խոտապահանջ վերլուծութեանց բազմակիսճիւն գործողութիւնները աշխատութեան սենեկին մէջ կը թողու , եւ մարդիկներուն կը բերէ կ'ընծայէ միայն իրաց ծովը , ինչպէս դաշտերուն մեղուն :

Ահաւասիկ առաջին հայեցուածին ուշ գրաւող գրոշմներն ու կնիք . պատշաճութիւնն , աւետարանականութիւն , խաղաղարար ներդաշնակութիւն , կատարեալ ընդարձակութիւն , պերպոյն զիւրութիւն՝ հանդերձ պիտնական ճշրութեամբ եւ այն անհամեմատ արուեստական պարզութեամբ , յորում առանց զիրար մերժելու քաղցր միաբանութեամբ կը զուգին շքեղազարդ պերճութիւն եւ բազմազեղունն զիտութիւն :

Տայցն Երկինք զի այս լուսատու եւ հաշտարար Գործն իջնայ հեղիկ ու մեղմիկ՝ աշխարհիս վրայ ընդ Սուրբ Հոգոյն Պենակկոտտէի : Քարողութիւն նոր , կամ լաւ եւս յաւխտնահան քարողութիւն այժմեան ձեւի մը տակ , այս նոր Երջարեւակոն կը մարմնաւորէ յինքեան զմիութիւն , զանընդհատութիւն , եւ զլուսաւոր դարդացումն Կաթողիկէ վարդապետութեան , որ յաւերժարար կը նորոգի իւր աստուածային զիւթութեամբն եւ ազդեցիկ կորովոյն զիւրադարձութեամբ տանելու

համար ամեն ախանց վրայ եւ ամեն ժամանակներու՝ զողին որ
 կը կենդանացնէ , զներդործութիւն որ կը բեղնաւորէ , եւ ըզ-
 դարմանն որ կը բուժէ : Մայիսի առաջին օրը տեսնուեցաւ
 սարդ քահանայ մը^(*) որ ելաւ մարդկային կռիւներու արիւնա-
 ներկ թէտորոնին վրայ : Ո՞չ սպաքէն այս զիւցաղնութիւնը
 սրտակեր է եկեղեցւոյ միջնորդական պաշտաման, զոր արդ իսկ
 Լեւոն ժ.Գ. դժեց քանդակեց այնպիսի ճիշդ ու ճշգրիտ, այն-
 պիսի փառաւոր զրչաւ :

Գեորգ Է. Թերզեպաշեան

Ա Ր Ձ Ա Գ Ա Ն Ք

ՀԱՄԱԺՈՂՈՎՈՅՆ ՍԱՐԱԿՈՍԱՅ ^(**)

Սարակոսայ Համաժողովոյն մէջ Սրբազան Քահանայապե-
 տին ժամանակաւոր իշխանութեան հարկաւորութեանը վրայ
 խօսուած ճառերուն ամենաերեւելիներէն մին էր ձեւոն Քար-
 պօնէրօ ի Սօլ» կոմսին արտասանած ճառն , զոր չկարինալով
 ամբողջակի ներկայացնել աստ , — վասնզի մեծազիր լրագրոյ մը
 չորս սիւնակները բոլորովին կը զրաւէ— , եւ ոչ ալ անոր կա-
 տարեալ քաղուածոյքը տալ , — զի ծայրէ ի ծայր յանչալիս ճոխ է
 բարձր խնտոսներով, պատմական մերձեցուցմամբ , լրարու հետ

(*) Գաղղեց Թորօ՛ գեղին հոգաբարձու Կահանայն, որ Մայիս Ժ-
 կն Քործասարաց կոստէն առնիւ անկեալ դիւաններուն Ժժ անձնէնէր
 հաշտութեան և խաղաղութեան քարոզէց , և առաւել Կան զինտորաց
 սոսինները՝ իւր աւերաբանական յայնը քաղաքեցոց արեւանակոտութե-
 նը . ժամանոյ Լեւոն Քահանայապետ իրեն գովասանաց Կամակ ուղղէց և
 Գաղղեց արեւոտներնը զնէր պարտուեց :

(**) Ի Սպանիա :

սերտիւ կապակցեալ սկզբունքներով եւ հետեւողութեամբ— ,
անոր մի քանի հատուածները կը գնեմք ատտ :

« Քահանայապետն Հոովմայ , ըսաւ Պ. Քարպօնէրօ ի Սօլ ,
ուհի կրկին իշխանութիւն . հոգեւոր իշխանութիւն , որ յԱս-
տուծոյ կարգեալ է , եւ ժամանակաւոր իշխանութիւն , որ Նա-
խախնամութիւնէ կարգեալ է :

« Գերագոյն հոգեւոր իշխանութիւնն ունէր յինքեան , ի ըս-
կըզքան անդ իւրում , ժամանակաւոր իշխանութեան սերմը , որ
ի ժամանակին եւ ի միջոցին պիտի ծլէր հոգեւորականին ծա-
ւարմամբն :

« Հոգեւոր իշխանութիւնն եւ ժամանակաւորն՝ Քահանայա-
պետութեան քրկու կազմիչ մասերն են , որպէս հոգի եւ մար-
մին զմարդ կը կամեն . եւ ինչպէս որ մարդուն համար հոգին,
նոյնպէս Պապին համար հոգեւոր իշխանութիւնն է էութիւն ,
մինչդիւ ժամանակաւոր իշխանութիւնն գործելու միջոց եւ գոր-
ծիք է :

« Իւր Աստուածաւանդ իշխանութիւնը գործածելու համար,
ուսուցանելու նիւթական միջոցներու եւ իւր հոգեւոր որդւոց
հետ յարատեւ հազորակցութեան հարկաւորութիւն ունի Սըր-
բազան Քահանայապետն . եւ այդ միջոցներ իրեն միմիայն յա-
տուկ եւ այնպէս մը երաշխաւորեալ ըլլալու են , որ երբէք , ոչ
յուսմբէ եւ ոչ ուրեք , ո՛չ խափանիլ , ո՛չ քննադատուիլ եւ ո՛չ
արգիլուիլ կարենալու են , վստայի ինդիբը խղճի անդորու-
թեան , ընտանեաց պատուոյ եւ ազգաց խաղաղութեան վրայ է ,
միով բանիւ Աստուծոյ փոխանորդին նուիրապետական պիտա-
ւորութեան վրայ է :

« Հետեւաբար , պէտք է որ նա տէր եւ իշխան ըլլայ երկ-
րի մը՝ որ իրեն սեփական ըլլայ , եւ ուր նա ունենայ լիակա-
տար ազատութիւն եւ իրաւունք , ուսուցանելու , օրէնքներ տա-
լու , իշխանութիւն բանեցնելու եւ պատաստան ընելու : Ոյր
վանն , նա ոչ ումեք կրնայ հպատակ ըլլալ եւ ոչ բնակիլ երկրի
մը վրայ՝ որ իրեն չըլլայ : Լոնտրայի Արքեպիսկոպոս Մաննինկ
Կարգինալը կ'ըսէր որ « ժամանակաւոր իշխանութեան առաջին
« պայմանն է՝ Քրիստոսի փոխանորդին բոլորովին անկախ ըլ-
« լալը , այնպէս որ նա երկնից տակ ուրիշ ո՛ր է . ե իշխանու-
« րեան հպատակ ըլլալու . քէ , հապա մի միայն Աստուծոյ » :

« Եթէ այսպէս չըլլար , սա անտեղի հետեւութեան պիտի
յանդէինք , թէ՛ երկրիս վրայ զսնուող ամենամեծ իշխանութիւ-

նրն՝ որուն հպատակ են կերպասէս ամենայն աղղայ Կաթողիկեայ պետերն , եւ զբրո՞ւնիանա՞քսր չկաթողիկեայք , իրեն կերպասէս կամ զբրո՞ւնիանա՞քսր հպատակացը հպատակելու վիճակին մէջ պիտի գտնուէր : Բայ ատտի , իշխանի եւ հպատակի վիճակին մէջ միջին ճամբայ մը չկրնար ըլլալ , եւ այն որ իշխանն չէ՝ ի հարկէ հպատակ պիտի ըլլայ :

« Եթէ Սրբազան Քահանայապետին ժամանակաւոր իշխանութիւնն հաւատոյ մասն չէ , ուղիղ բանի եւ ողջամիտ կարծեաց սկզբունք մի է . հարկաւորութեան , պառաշածութեան եւ նախախնամական սնօրէնութեան վարդապետութիւն մի է , վասնզի բացարձակ հարկաւորութիւն մը եւ պառաշածութիւն մը կայ որ Պապն ըլլայ անկախ Վեհապետ , ինչպէս որ 1862ին ի Հռոմ դումարեալ չորս հարիւրէ աւելի Եպիսկոպոսունք յայտարարեցին բռնով « Ոչ ոք ի Կաթողիկէից կրնայ առանց մեղաց « երկրայից Սրբազան Քահանայապետին ժամանակաւոր իշխանութեանը վրայ , այժմեան պարագայից մէջ , իւր Աստուածաւանդ « ւանդ իշխանութիւնը ազատարար գործածելու համար . . . » : Վասնորոյ Պապին ժամանակաւոր իշխանութեան վերահաստատութիւնը Իտալիոյ ներքին ինդիւր մը չէ , այլ միջազգային հարկաւորութիւն մի է , կամ լաւ եւս , արեւելեական պէտք մի է :

Սարակոսայի Համաժողովոյն մէջ խօսուեցաւ նաեւ վարդապետական խնդրոյ , մանաւանդ Եկեղեցւոյ ուսուցչութեան հարկաւորութեանը եւ ազատամտութեան անտեղութեան նրկատմամբ , որուն վրայ սքանչելի ճառ մը խօսեցաւ Օրիհիւէլայի Եպիսկոպոսն , եւ յայտնապէս ցցուց թէ , նոյն իսկ բնական կարգի մէջ , մարդկային բանաւարութիւնն չէ ազատ կարողութիւն , այլ հարկաւոր . եւ սահմանուած է իրաց սուարիական իրականութեանը , եւ շատ անգամ իսկ , ի գործնականի , ուրիշ մարդոց հեղինակութեամբն ճշմարտը ճանչնալու . վասնզի , մէկ կողմանէ , սահմանախակ են մասաւորական կարողութիւնք , որք չեն կրնար ամեն բան բմբունել , եւ , միւս կողմանէ , մարդս՝ ի ծնէ բնկերական վիճակի մէջ է , որով այլոց գիտութեանէն կ'օգտուինք , մանաւանդ գիտութեանց այսչափ յառաջադէմ զարգացած պահուն , որում ոտակականք չեն կարող ըստ ամենայնի խելամուտ ըլլալ . սակայն՝ ի գործնականի , ամենքն ալ կրնան անկէ օգուտ քաղել : Իսկ արդ՝ եթէ բնական կտրդի մէջ այսպէս է , առաւել եւս մարդկային բանաւարութիւնն ազատ չէ գերբնական կարգի մէջ յորում չկրնար վերահասու լինել ճշմարտութեանը :

մարտութեան՝ եթէ ոչ հիմնեալ՝ Աստուծոյ եւ նորա Եկեղեցւոյն հեղինակութեանը վրայ : Ուրեմն, այն զոր կը կոչեն ազատամարտութիւն , ոչ այլ լինչ է, եթէ ոչ հպարտութեամբ ներշնչեալ եւ սրտի ապահանութեամբ մեկալ ապստամբութեան եւ քառուութեան հողի մը :

Աշխարհական ատենաբան մը , Տ. Վաղնետ. Կոմէյ , որ Movimiento Catolico լրագրոյն սնօրէնն է , Քրիստոնէական ընկերութեան վրայ պերճաբար խօսեցաւ , ցուցնելու համար թէ Եկեղեցւոյն միշտ քարոզած է եղբայրութեան , հաւասարութեան եւ ճշմարիտ ազատութեան աստուածաւանդ սկզբունքը :

Մեր դարուն ռժիքներուն եւ մոլորութեանց , որպէս նաեւ ազնիւ յօժարութեանց, ներշնչութեանց եւ հանճարոյ վրայ, զոր ազանդաւորական հողին փոխեց յապերատանութիւն եւ յանրդատութիւն , ախարկ մը ձգելէ յետոյ , Պ. Վ. Կոմէյ ազգուշեշտերով հրաւիրեց Կաթողիկէ ընկերութիւնը մեծաշուք հանդիսիւ մտնելու Ի՞նչ դարուն մէջ, նշանաբան առնելով հեթանոսաց առաքելոյն այս խօսքը « Այք Հոփօյեցի է՛ » :

« Այո՛ , ըսաւ , հաւասարութեան տիտղոսով մեք ամենքնիս Հոփօյեցիի եմք : Ռամկապետութիւնն զմեզ չստակացներ երբեք . մեր գործ զայն մաքրել ըլլալու է առաքինութեամբ , ժողովրդեան որդիքը ազնուացնել սակհուն հանգերծիւք, զոր Եկեղեցւոյն կը կարգէ իւր սրբոց , զիտութիւնը՝ իւր իմասանոց , արուեստը՝ իւր հանճարաց , հայրենիքը՝ իւր զիւցազանց , եւ այս՝ իրենց սեփական արժանիքէն զատ՝ առանց ուրիշ պատուանուն մը փնտռելու :

« Կուսազատութեան հնարած գերութեան լծոյն տակ ընկճած ժողովրդոց ճակոխն վրայ՝ նոցա վերակենդանութեան անջնջելի կնիքը տարուորած ըլլալուն փաւքը՝ Եկեղեցւոյ ձեռքէն ո՞վ կրնայ յախշատիւր Ո՞վ է որ խղեց եւ խորտակեց հին սուղ իշխանութեանց երկաթեայ շրջանակը , որք մարդկութիւնը դարձուցած էին առանձնաշորհեալ գերդատանի մը՝ որուն կը ծառայէին անանձնաւոր , անսնուն էակաց մի բազմութիւն , որոց իրենց փիլիսոփայութիւնը մարդու անգամ պայմանը չէր չնորհեր : Եկեղեցիէն աւելի ըսւ ո՞վ հատուտեց Աստուծոյ եւ օրինաց առջև հաւասարութեան սկզբունքը , հանրային պաշտօններ կատարելու ամենուն ունեցած իրաւունքը՝ որ հիմնեալ ըլլայ անձնական արժանեաց վրայ : Ընտրութեան եղանակը , նոյն իսկ գերիշխանութեան ամենաբարձր երեսփոխանութեանց

համար , առանց ի բաց առնելոյ Քահանայապետական զերիշխանութիւնը , եւ ուրիշ շատ մը սկզբունքները՝ որոնցմով կը պարծի ազամտաց ազանգը , իբրեւ իրեն սեփական աշխարհակալութիւնը . երբ զանոնք պիտի ճանչնար ինքն , եթէ Եկեղեցին , շուրջ երկու հազար տարիէ ի վեր զանոնք ուսուցած չըլլար :

« Եկեղեցիէն աւելի ժողովրդական եւ ընկերական հաստատութիւն մը եղած է երբէք : Միթէ հաւասարութիւնն եւ ռամկապետութիւնն իսկ , բառին բովանդակ առմամբ , գոյութիւն պիտի ունենանք առանց Եկեղեցոյ , առանց անոր Աստուածային Հիմնադրին՝ որուն վրայ արքայական արժանապատուութիւնը եւ ռամկական հանգամանքն սքանչելի իմն եղանակաւ միացած էին , որպէս Աստուածայինն եւ մարդկայինն , ի մի խորհրդաւոր անձնաւորութիւն (hyposthate) : Միթէ Եկեղեցին չէ՞ որ յարոյց յաղբեաց խոնարհները , սնանկները , լքուածները եւ զանոնք մեզ օրինակ տուաւ նմանելու , այնպէս որ եթէ մեր սիրտ անոնց պէս խոնարհ եւ աղքատ ըլլալու չըլլայ , անոնց պատրաստած փառաց չեմք կրնար արժանանալ : Ո՞րք են ազնուականք , իշխանք , թագաւորք , որոնց Քրիստոս յանձնած ըլլայ իւր Աւետարանին լոյսը ի ծագս աշխարհի տանելու : Ի՞նչ տխուրս ծննդեան պահանջեցին երբէք Հռովմայ Քահանայապետ ընտրելու համար : Ի՞նչ կը նշանակէ անունդ Եկեղեցի , եւ ըստ ինքեան ի՞նչ է Եկեղեցի , եթէ ոչ ժողով , համախմբութիւն Քրիստոսի ժողովրդեան , սքանչելապէս կազմակերպեալ եւ հովուեալ ի ձեռն իշխանութեանց՝ զոր չժառանգեր ոք եւ ոչ այլ ինչ միջոցով կ'ստանայ , եթէ ոչ պիտութեամբ եւ առաքինութեամբ : . . . Այս միջոցները , այս սկզբունքները Եկեղեցին բարձրաձայն քարոզելէն չկատեցաւ երբէք , մինչեւ իսկ աշխարհի ամենազօր թագաւորաց առջեւ եւ կաթողիկէ միապետաց ամենափայլուն ժամանակը :

Արդի եւ գործնական խնդիր մը , որպիսի է Մամլոյ խնդիրն , պարզեց Հ. Եղ. Լանաս հետեւեալ եղանակաւ , եւ ըսաւ թէ մամուլն պարզապէս միջոց մի է ժողովուրդը քաղաքակրթութեան կամ բարբարոտութեան առաջնորդելու համար . ոյր վասն մասնամանիչ ընկու է այն կանոնները՝ որոյ պարտի հարատակել առաջնոցն նպատակու եւ երկրորդէն խորչելու համար :

Լուսն Ժ.Փ. Սրբազան Քահանայապետին այլ եւ այլ ազգաց լրագրագետներուն 1883 փետրուար 22ին ուղղած սա խօսքը յիշելով , թէ «Յեզափոխութիւնն գործածեց մանաւանդ պարբե-

րական մամուլը Եկեղեցւոյ դէմ մաքաւելու համար» Հ. Լանաս սկզբեց մամուլը կանոնաց սակ առնելու վրայ՝ որք կարենան զբարեւել նորա ողբալի խոտորմունքը, եւ ժողովրդոց բարոյական եւ կրօնական շահերու նպատաւոր ծաւալման մը շրջանակին մէջ զայն կարենան հաստատ պահել :

Ատենաբանն յարեց թէ լոկ սղատակուն եւ յեղափոխական մամուլոյն չէ, այլ նաեւ Կաթողիկէ մամուլոյն վերագրելու է այն չարեաց պատասխանատուութիւնը՝ որք ի մերում ժամանակի կը առաւապեցնեն զԵկեղեցին. եւ այս բաժին ի նպատո յառաջ բերաւ Սրբազան Քահանայապետին, 1884 Նոյեմբերի մէջ Փարիզի նուիրակին ուղղած թուղթը, յորում Ս. Պատին, Կաթողիկէից դոնուող երկպառակութեան վրայ յաւ յայտնելէն յետոյ, կը յիշեցնէ լրապրասպետներուն խնդիրներ յարուցանելէն ետ կէնալու պարտքը, որոնք Կաթողիկէականաց մէջ երկպառակութիւն կը ձգեն, եւ ներքին վէճերու այսչափ չարաչար գործածուած ոյժերը Եկեղեցւոյ պաշտպանութեան պործածելու պարտքը, եւ կը յայտարարէ թէ՛ եթէ իրենց ընթացքով տկարացնելու ըլլան այն սկիւածութիւնը եւ հնազանդութիւնը՝ զոր պարտին ընծայել Եպիսկոպոսաց, իւրեանց թերթերու ազդեցութիւնն բարիք ընելու չէ թէ միայն ամուլ, այլ եւ, ըստ բազում տեսակէտաց, բոլորովին վնասակար պիտի լինին :

Ըստ Սրբազան Քահանայապետին Լեւոնի Ժ.Գ.ի, շարացարեց ատենաբանն, հրապարակագիրն, Կաթողիկէ հրապարակագիր կոչուելու իրաւունքն ունենալու համար, պարտի յամենայնի հպատակ եւ համամիտ լինել իւր Եպիսկոպոսին եւ Առաքելապետական Աթոռոյն. նա պէտք է որ ըլլայ հրապարակագիր եւ առաքեալ միանգամայն : Կաթողիկէ լրագրութեան պաշտարն, ինչպէս որ Սրբազան Քահանայապետ կը պարզաբանէ, ըստ ամենայնի հակառակ է գրեթէ բովանդակ արդի Կաթողիկէ մամուլ հրատարակութեանց, որոց գոգցես եւ ոչ մին ենթարկեալ է Եկեղեցական դրաքննութեան, եւ որք սակայն կը ճառեն Կաթողիկէ վարդապետութեան, քրիստոնէական բարոյականի, Եկեղեցւոյ բարեկարգութեան, Եպիսկոպոսաց իրաւասութեան, Եկեղեցւոյ ազատութեանց վերաբերող խնդրոց վրայ :

Ատենաբանն յետոյ ջանաց յայտնապէս յուցնել թէ Կաթողիկէ մամուլ մը զազափարն, որ Եկեղեցւոյ դերագոյն իշխանութիւնէն որոշուած կանոնաց եւ նախակարգ քննութեան ենթար-

կուած ըլլայ, լոկ տեսական փախաղ մի չէ, այլ կատարելապէս իրագործելի մի հաստատութիւն է : Ի Հոռով, ընդ դաներիցութեամբ Սրբազան Քահանայապետի գումարեալ ժողովքի մը մէջ, արգիլեալ գրոց կաճառին նման ժողով մը կ'արգելու այն դադափարը՝ որ տպագրութեան վրայ հակելու եւ զայն քննելու պաշտօնն ունենայ . արդէն քննուած է : « Ո՞ գիտէ, ըստ Հ. « Լանաս, եթէ այժմեան սերունդն պիտի չկարենայ ողջունել « կրօնասիրական հաստատութեան մը ծագումը, որոց գիտուն, « բազմամուտ, եւ քաղաքագէտ անդամքն ուխտիւք պիտի նուր- « րեն զանձինս յարուեստ լրագրութեան : Աչաց առջեւ ունե- « նալով Եկեղեցւոյ բռնած անտիտիտ ընթացքը՝ որ նորանոր « պիտոյից միշտ նորագոյն դարմաններ հակադրեց, ինձ սոոյս « թուի, թէ՛ բանապաշտ եւ անկախ մամլոյ դամբան զբամ տա- « բածուելուն՝ պիտի հարկադրէ բուն Կաթողիկէ մամուլ մը, որ « պիտի ունենայ քաջ հրապարակադիրներ՝ որոնք պիտի աշխա- « ան իւրեանց Նոյիկոպոսաց կամ նոցաներկայացուցչաց հը- « բամանին ներքեւ » :

Բայց, առ ժամս, իւրաքանչիւր Կաթողիկէականի պարտքն է, ըստ իւր կարողութեան, մանաւկցիլ այն սակաւադիւտ լրագրաց տարածման, որք այժմ կը նուիրեն զիրենք Եկեղեցւոյ պաշտպանութեան, մանաւանդ եթէ սոյն լրագիրք հրատարակուելու ըլլան հաւանութեամբ եւ ընդ հսկողութեամբ Եկեղեցական իշխանութեանց : Ոչ-Կաթողիկէաց մամուլն իւր անսպասան ծաւալումը սլարտի մեծաւ մասամբ անոնց՝ որք զիրենք իրեն Կաթողիկէ անուանելով հանդերձ, իրենց բաժանորդութեամբը կը նպաստեն Եկեղեցւոյ հակառակ լրագրաց զարգացման եւ բարդաւածման : Պէտք է միանգամ ընդ միշտ խնանալ եւ խելամուտ լինել թէ Եկեղեցւոյ պաշտպանութիւնը միանգամայն մարդկային ընկերութեան պաշտպանութիւն եւ անոր խաղաղութեան եւ զարգացման հաւատարմն է . ընդհակառակն Եկեղեցւոյ դէմ եղած մարտ եւ թշնամութիւն ոչ այլ ինչ ծառայէ, եթէ ոչ մարդկային ընկերութեան հիմունքը խախտելու, խաղաղութիւնը վրդովելու, եւ անթիւ անհամար ազեռից եւ միատուց գուռն բաշալու :

Յովհաննէս Վ. Բելապէան



Ա Ր Ծ Ա Լ Ո Յ Ս

Ո՛հ , արշարճս , արշարճս ,
Պրսակ վառաց Անմահին ,
Իցի՛ւ վշտօք լըցեոյս
Աջք յար ի քեզ մընային :

Քե՛զ, ո՛վ հընց գունագեղ ,
Արդարութեան այ պատկեր ,
Զօնե բռնիկն ըզգեղգեղ ,
Ես ըզոգեակս աղօթիք :

Ահա դարձեալ ոսկեվարս՝
Յառագաստեղ վարդաբոյր
Եյար , ինչպէս նորահարս
Կ՛եյնէ շիկնուտ՝ այլ համբոյր :

Ծիրանեգոյն ներկեցան
Երկինք , յերանց այ սարեր ,
Զակամողիսդ հըրացան
Զիւրեւ ծովիկն է առեր :

Ահա տակաւ քայլ առ քայլ
Յնդին ըստուերք , է երկիր
Զարբնու , գարբնուն է սիրտք այլ
Օրհնէլ զքեզ , ջան յուսակիր :

Ամպեր կապոյտ է ճերմակ ,
Ի քաղցրիկ շունչ գեպիւտին ,
Հուր մագեյուղ վարշամակ
Գլխոյդ վերեւ կը բրուին :

Զայն տայ սոխակն անուշիկ
Վարդին , է վարդն ամըջկոտ
Ըզկուսական ծոցն՝ յուշիկ
Բանայ , բարվառ քաղցրահոտ :

Ո՛վ արշալոյս , արշալո՛յս ,
Անմահութեան գան եւ տուն ,
Կը սիրեմ զքեզ , Աստուծոյս
Անճառ խորհուրդ իմաստուն :

Ի խորս հոգւոյս վշտահար ,
Ուր յիշատակք կան քաղութած ,
Ո՛հ , դու ժբպիտ մ'ես գոհար ,
Զոր պարգեւեց ինձ Աստուած :

Սիրեմ զքեզ եւ կուգամ ,
Աղբի՛ւր յուսոյ անաղօտ ,
Լուանայ գսիրտս անըզգամ
Ի քեզ , ամեն առաւօտ :

Հոս , ճակատես մի առ մի
Կ'երբան սեւ ամայք տխրութեան .
Եւ տարակոյսն , ուր թռումի
Հոգւոյ ծաղիկըն գունեան ,

Իւր յայն ու սեւ քեւերով
Մըտացս ըզծով չը խռովեր .
Եւ կ'ամբառնամ անխրոով
Զաջս ու հոգիս իմ ի վեր :

Թըւիս յայնժամ ինձ քաղցրիկ
Պատկեր կենացս իմ վերջին ,
Եւ կարծեմ զիս անդորրիկ ,
Փոխեալ ի գիրկ Արարչին :

Երանութի՛ւն երկնաւոր ,
Սակայն երազ վաղանցուկ ,
Դեռ ջեմ մեռեալ , հարկ է որ
Կոխեմ գաշխարհս այս անցուկ :

Գեթ մի՛ մոռնար զիս բընաւ ,
Ո՛վ արշալոյս քաղցրոզի ,
Մինչեւ փոսին մեջ խոնաւ
Անշունչ մարմինս իմ փակի :

Տո՛ւր քաղցրիկ յոյսդ իմ սրտիս
Ու ապրիլ , կըրել ինձ ուսո՛ւ .
Ինչպէս որ դու կը ժպտիս
Ժպտիմ եւ ես առ յուսոյ :

Քաղկեդոն

ԿԱՐԱՊԵՏ Ա. ՈՍԿԵԱՆ

ՇՈՒՐՋ ԶՄԱՅԻՍԻԻ

Երբանք արձակ շրջագայի մարմանդներ,
Դաշտ ու հովիտ ժրպտին խայտան առջեւ մեր .
Ատոնք ո՛րքան սիրահրաւեր
Գեղազարդ են տեսարաններ .
Փառք տամ քեզ Տէր :

Տես, ո՛վ եղբայր , ծագած արեւն ոսկեզոյն
Պարգեւող է կենդանութեան ամենուն,
Մուր ցրուելով՝ բրմութեան խոն,
Նորոգ ուժով կ'ընէ արբուն
Բոլոր բնութիւն :

Լքե՛, որպէս առանձնացած անտառակ
Սիրաբարբառ կ'երգէ սոխակ սուրբ նրագ,
Խորհրդաւոր եւ ներդաշնակ
Կ'ազդէ մարդու հանոյ՛ք անյագ
Սրբտին յատակ :

Քաղէ, լեցուր, ափերուդ մէջ եւ ափսեայն
Կեռաւ կարմիր, ելակ բագովն ազնուական,
Ծիծաղերես դիր հոյ բերան
Քաղցրամաշակ համեղ է այն
Քանքէ ծիրան:

Հոտոտէ այր պարտիզին մէջ բոյր ի բոյր
Վարդեր վառվառ, եւ ծաղիկներ համազփիւռ
Մայիս ամսունն անայշ գեփիւռ
Հոն դալարեաց կուտայ համբոյր
Գրգոււանօք բիւր:


Գրեաց
Մ. Վ. Ո:



ԷՐՆԷՍԹ ՆԱՎԷՅԻ

«ՈՒՍՄՈՒՆՔ ՄԱՐԳԱՐԷԻՅ ԱՅԺՄԵՆՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՅ»

ԱՆՈՒՆ ԳԻՐՔԸ



Էրնէսթ Հալէ, որ վերջերս վախճանեցաւ, իւր անհաւա-
տութեան կտակը թողուց մեզ իւր «Ուսման Ժողովոյ Կոմի-
տէն»-ընէն վրայ՝ զրքին մէջ: Նորա որդին, Պ. Լուի Հալէ, այր-
դի բանասիրաց ամենաերեւելիներէն մին, իւր ի Սորբոն ըրած
դասախօսութեանց միոյն մէջ՝ վախճանելոյն գծագրութիւնը նը-
կարեց, եւ անոր գաղափարաց ուստի՝ յառաջ եկած ըլլալը ծա-
նոյց: Հալէ, մինչեւ իւր վեշտասան տարին, շատ բարեպաշտ
էր, եւ զՎոլթէր՝ իւր առաջին վարպետը՝ կարդալով երկբայու-
թեան մէջ ինկաւ, եւ Բասգալի, «Սոբորգաւմանիէն» Բասգալի »
գրքին ուսումը՝ փոխեց նորա երկբայութիւնը յանհաւատութիւն:
Ահա, ստուգիւ մի հետաքրքրաշարժ մտնուեցուցում, եւ շատ
քիչ համեմատութեան օրինակ գտնուելու է Ժիլք դարու մեծ
խորհողին եւ Ֆէռնէյի փիլիսոփային մէջ, որուն համար՝ Պրիւ-

ներթիւն կ'ըսէ թէ « Իւր դարուն մէջ ամենանոսազ գաղափար ունեցող եւ ամենալաւ անյնասիրդաբեան որ էր մարդ մի էր » :

Զիւրդ եւ իցէ , Հալէ անտարբերութենէն անցաւ բնական նարար յատելութիւն Քրիստոնէութեան՝ եւ նոյնպէս ամեն կըրօնից , եւ անոր մարդկային ծագումը յուցնելու ետեւէ եղաւ : Ռընանի «Կեանք Յիսուսի» կոչուած գրքին գաղափարները իւրացուց , եւ զայն սրաշաղանկու համար պրեց : Այս առթիւ է որ Յրէքէլ Նպակ. զեղեցիկ պատասխան մը գրեց Կաթողիկէ վարդապետութիւնը սրաշաղանկու համար : Հալէ կը կշտամբէր թէ Ռընան բաւականաչափ համարձակած չէր , եւ ինքն կը յայտարարէր թէ «Յիսուս առաջի Կայեափայկ» չունէր աւելի արտատուր ինչ քան «Յովհաննա տ'Արք առաջի հաւատաբնութեան Ռուանի» :

Պերճախօսն Ե. Գարօ , իւր «Գաղափար Աստուծոյ եւ անոր նոր քննադատները» կոչուած երեւելի գրուածոց միոյն մէջ յուցուց Ռընանի ատութեանց ինչ արժէք ունենալը , Խորախորհուրդ խելքով եւ կատարեալ բնորոշութեամբ մատնանիչ ըրաւ «Կեանք Յիսուսի» հեղինակին ունեցած արտաքոյ կարգի հակաութիւնները :

Հալէ այս ամեն հակաութեանց մատնակից եղաւ : « Ռուանի մարգարէից պատմութեան վրայ » գրքին մէջ կամի ապացուցանել թէ՛ ամեն Եբրայական մարգարէութեանց գրքերն մեր թուականէն յառաջ՝ Բ. կամ Ա. դարու վերածուելու են , եւ թէ անոնք լոկ բանաստեղծական պատմութիւններ են , Ամոնեանց (Մակարայեցոց) յաղթութեանց չափազանցական տօնախմբութիւններ , կամ սրտառուչ ողբեր են այն խռովեալ ժամանակաց դժբաղդութեանցը վրայ՝ որք այս մեծաշուք փառաւորութեան ժամանակէն յառաջ տեղի ունեցան :

Ի սկզբնակէտի անդ , կը գտնեմք մի կրկնումն սկզբանց . « Մարգարէութիւնք անրնյուրների են . ուրեմն մարգարէութիւնք « չկան : Մարգարէութիւնք կոչուած բաներն՝ ներկայ կամ անց « եալ իրողութեանց պատկանող բանաստեղծական զեղծմունք « են , եւ որովհետեւ Հրէից պատմութեան մէջ այնչափ չնչեալ « անձինք ունենալու մի միակ յաջող ժամանակն Մակարայե- « ցոց ժամանակն է , ուրեմն այդ թուականին իջեցնելու է կար- « ծեցեալ մարգարէները » :

Խնդիրը այսպէս դնելէն յետոյ , Բ եւ Ա. դարու պատահարները հին բնագիրներու մէջ փնտռել գտնել հարկ էր . եւ ա-

ունց բռնադրուութեան չէ որ հեղինակն անոր կը համնի. բայց ինչպէս եւ որպիսի՞ անկարելիութեանց ձեռքով հիմա պիտի տեսնենք : Երեք զլիւի կրնան վերածուիլ զլիաւոր առարկութիւններն , որք առաջին ընթերցմամբ աչքի կը դարնեն .

1. Զհեղծումն յետեւյառաջութեան անուանց ,

2. Զանցառութիւն բնագրոց հակառակելոց յառաջադրութեանն (thèse) .

3. Ենթադրութիւն Մեսիական սուտ հրաշապատումի մը որ ի սկզբան Քրիստոնէութեան հնարուած ըլլայ :

Հավէ կը պնդէ թէ իւրաքանչիւր մարգարէ՝ իւր գրուածոց աւելի ծանրակշռութիւն տալու համար հին անուն մը առաւ : Սակայն ինչ հեղինակութիւն կրնար հանել նախնիքէ մը , որ անցելոյն մէջ իւր գոյութեան հետք մը թողուցած չէ , եթէ ոչ թափառութեան գրքին մէջ մի յիշատակութիւն : Բաց աստի , միթէ արտասովոր չնընելի թէ վեշտասան մարգարէք մի եւ նոյն գաղափարը ունեցած ըլլան :

Միանգամ որ այս ճամբան ձեռք առաւ , այլ եւս չկասիր մեր հեղինակ : Ըստ նմա , Հերովդէս Մեծն է Կիւրոս Եսայեայ մէջ . մինչդեռ Անգէոսի եւ Զաքարիայի մէջ Զօրաբարէլ կը կոչուի : Նարուքոյնստոր կը լինի մեծն Անտիոքոս : Օծեալն Տեառն , մերթ Հերովդէսն է Ամբակումի մէջ , մերթ Միմն կամ Յովհաննէս Հիւրկանոս է Եսայեայ եւ Երեմիայի մէջ , եւ այսպէս հետզհետէ : Ահա երկու մտահար օրինակներ՝ որք կը ցուցնեն թէ այսպիսի ընթացք մը մինչեւ ո՛ւր կրնայ տանիլ :

Հավէ կը յայտարարէ թէ Զաքարիա կը խօսի յայտնապէս Հերովդէս մեծին վրայ , մինչ կը ցուցնէ «Աստուծոյ հրեշտակը որ յերուսաղէմ կը մտնէ ճստեալ ի վերայ յաւանակի իշոյ» : Իսկ արդ՝ Հերովդէս շատ չարաչար վարուեցաւ Հրէից հետ , եւ սոյն այս մարդը , որ իւր նախորդացը , իւր կնոջ եւ զաւակացը եւ իւր հպատակացը սպանիչ եղած էր , մեզի դառնուկի պէս հեղ ցուցնել կ'ուզեն : Այս այն Հերովդէսն է զոր Մաղաբիա իւր մարգարէութեան սկիզբը սաստիկ կը կշտամբէ , Անտիպատրի որդոյն մահուանէ յետոյ ըլլալու է , կ'ըսէ Պ. Հավէ :

Ամեն մարդ կը ճանչնայ Եսայեայ մարգարէի այն հոյակապ էջը՝ յորում մարմնացեալ Բանին Աստուծոյ չարչարանքները եւ մարդկային ազդին ազատութիւնը կը նկարագրէ : Արդ՝ ստոնք Մեսիայի հետ յարաբերութիւն չունին եղեր , այլ առ հասարակ Հրէից կը վերաբերին եղեր . ինչո՞ւ , վասնզի Հավէ հոն գտած

է յոգնակի մը : Բայց այս յոգնականին քով, 45 հատ եզակիներ կան , մանաւանդ պարբերութիւն մի եւս կայ , յորում Եէհովա (Աստուած) , յաղթութիւն եւ Հրէից ժողովուրդն իրարու հակադրեալ են . սակայն այս ամենայն չեն համարուիր այն համբաւոր յոգնակիի քով :

Այժմ հասանք Երկրորդ ընդհանուր քննադատութեան՝ զոր նշանակեցինք ի վեր անդր . եւ այն մէկ ապացոյցով կրնայ հաստատուել : Կուզէք գիտնալ թէ Հալէ՛ Դանիէլի համբաւոր Եօթնասուներորդները ինչպէս կը մտնէ : «Անոր սկզբունքները մըթին է , կ'ըսէ , բայց վերջապէս կը հասկցուի » : Հալէ ինչպէս հասկցած է , դայս ըսելու մոռցած է :

Վերջապէս , Ասմոնեանց եւ Հերովլէսի կառավարութեան երջանիկ ժամանակներէն յետոյ՝ Մեսիական հրաշապատումի ի յայտ գալը՝ բողոքովին անընդունելի է , մանաւանդ Հալէի տեսութեամբ : Հիւրկանոս Ա. Քրիստոսէ 106 տարի առաջ վախճանեցաւ , եւ Հերովլէս Մեծն մի տարի յետոյ : Մաղաքիւս , որ Հերովլէսէն յետոյ գրած է եղեր , թերեւս իսկ Յովնանէս Մըկերոսէն յետոյ , սակաւին չմոռցուած ըլլալը կը ցուցնէ , գէթ վերջինս . սակայն եւ այնպէս հարկ էր որ յայնժամ հրաշապատումը գոյութիւն ունեցած ըլլար , ինչու որ ճիշդ այն վայրկեանն էր յորում Քրիստոս իւր քարոզութիւնը կը սկսէր , եւ յորում կը ճանչէին արդէն ի նմա զՄեսիայն : Մակարայեցիներէն ետքը ուրիշ ժամանակամիջոց մը չկայ՝ յորում այնպիսի մի հրաշապատումի յառաջ գալը կարենանք ընդունիլ :

Վերջապէս իրաւունք ունինք հարցնելու թէ Պողոմէոս Փիղապեղիոսի ժամանակ (285—246 Քրիստոսէն յառաջ) Եօթնասուից թարգմանածը ինչ էր . եթէ Մարգարէութիւնք , Սաղմոսք , Հնգեմատեանն Մովսիսի , եւայլն , մեր թուականէն յառաջ՝ Բ. կամ Ա. դարու մէջ յորինուեցան :

Առանց ուրիշ մանրամասնութեանց մտնելու , թուի մեզ թէ վերոյիշեալ մի քանի ընդհանուր դիտողութիւնք յայտնի կը ցուցնեն թէ Ե. Հալէի անկողմնակալութիւնն մեծ արժէք մը չունի քան զիւր որդոսնը :

Քրիստոնէութեան ազրիւրները՝ Պուզղայութեան , Հելլենականութեան մէջ ամենուրեք , ի բաց առեալ անդ՝ ուր ենն , շատ մը վնասուելէն յետոյ՝ անել եւ անճողպրելի չիտթութեան մէջ կ'ինկնան , եւ նորա աստուածային լինելը կը խոստովանին սնրբաւականութեամբ եւ անկարողութեամբ ջանկոյն , զոր կ'ընեն

դայն փակելու համար այն բանին մէջ զոր կը կոչեն արդի Քը-
նարարութիւն, որ ոչ այլ ինչ է՝ բայց կթէ ոսնձգութիւն նի-
թոյ ի վերայ հոգւոյ : Յ. Վ. Յ.

Ք Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն



ԱՅՐԻ ԿԻՆ ՄԻ Ի ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ ԲԵՐԱՅԻ

Բերայի մեծ զերեզմանատան մէջ որ մ'ականատես ե-
ղայ տեսարանի մի, որ սիրտս յուզեց յանշտիս Մեծամեծ ծա-
ւոց հովանւոյն ներքեւ ի ժուռ կու գայի . կիզիչ էր սօթին , եւ
ես հոս եկած էի սակաւ ինչ զովանալու եւ մենանալու համար :
Կին մ'որ իբրեւ հնգետասանամեայ մանկիկ ՚ի գիրկս եւ ոս-
կենարգիսի մեծ փունջ մ'ի ձեռին անցաւ զնայ առջեւէս : Իւր
ետեւէն զնայի մեքենաբար . մտաւ նա ի խորս անտառին , եւ
այն ինչ գոցուած զերեզմանի մի քով համեմտով ի գուն իջաւ
երկրպագեց եւ սխաւ հեկեկալ : Իսկ ես նոճեոյ մի յեցայ եւ
զիտեցի զնա անշունջ :

Իւր կրկնոցին տակէն սրուակ մի հանեց նա , եւ մէջինը
թափեց տապանաբարին վերայ : Այս միջոցիս մանկիկը , զոր
մայրիկն ի գետին զրած էր , խայտալով առած էր ոսկենարգիսի
փունջն եւ ուրախութեան ճիչեր բառնալով կը խէր նորա տե-
րեւները . մայրիկն առաւ գայն նորա ձեռքէն եւ վերստին
սխաւ իւր ազօթքը : Մանկիկն յաջութամ իւր կթոտ ծնոցայ եւ ձե-
ռայ վերայ սողստիւով ընդ հուզ նորէն ձեռք անցուց ծագիկներն
եւ սխաւ վերստին խրել տերեւները : Տարաբազդ կինն յափըչ-
տակեց զայնս նորա ձեռքէն , եւ բողբոսիքը նայեցաւ , իւր
որդւոյն խաղուց զէմ մէկու մ'օգնութիւնը զոգցես իմն կը
հայցէր : Տեսաւ զիս , գրկեց զմանկիկն , ոտք ելաւ , եւ լսիկ
եկաւ գիրկս զրաւ զնա . յետոյ գարձաւ զնայ զերեզմանին վե-
րայ սղբալու : Հէք մանկիկն սխաւ լայ եւ ճչել :

Նստայ ի գետին , եւ փողպատիս ծայրերովը խաղցուցի

զնա , իւր սիրուն երեսը զուարթացաւ ընդ հուպ եւ հաճոյւք փայլեցաւ . այսպէս գրտաւ նա առ ժամանակ մի , յետոյ կ'երևի թէ յոգնեցաւ , զի իւր խարտեաչ փոքրիկ գլուխն իմ ուսոցս վերայ գրաւ եւ քնացաւ : Մնացի այսպէս առ նուազն ժամ մի , եւ չէի համարձակեր ամենափոքր շարժում մ'իսկ ընկուլ , առ երկիւղի թէ մի' գուցէ զարթուցանեմ զհէք մանկիկն , որ անոյշ անոյշ կը ննջէր : Մայրիկն ոտք ելաւ , զէս յիս եկաւ , առաւ զմանկիկն զգուշեաւ , եւ աչք յարտասուս եւ շնորհակալու մտօք ինձ նայեցաւ , ողջունեց զիս ձեռքը նախ չրթանցն եւ ապա ճակատուն տանելով . յետոյ գնաց զէս ի գերեզմանն , իւր կրկնոցին զրօշակովը ծածկեց զայնս , եւ իւր զնն եւս ննջող մանկիկը նորա վերայ պառկեցուց յուշիկ . ապա ծունր կրկնեց վերստին , եւ այնպէս իմն անշարժ կեցաւ , զոր տեսնողն արձան մի կը կարծէր . հիացական հայեցողութեամբք յափշտակուած էր նա գողցես : Ո՞վ ուրեմն այսպէս կը կեցունէր զնա : Միթէ իւր որդեկին զեզոցն տեսարանը : Միթէ ցանն այն մարդոյն՝ զոր կու լար : Թերեւս երկօքին եւս : Ամենայն ինչ անդ էր , յանձին այս ննջող անփոյթ մանկան եւ այս արտասուայեղց գերեզմանին մէջ : Մին լքած թողած էր կենաց դերսուկ ճանապարհը , միւսն իւր առաջին դողդոջ քայլերը դեռ նոր կ'առնուր անդ : Ո՞րն էր երջանակագոյնը : Նա , զոր հողը կը ծածկէր , այնպէս չէ՞ , ո՞վ Տէր , նա , որ կը հանգչէր ուր ուրեմն այն խոնջանքէն՝ զոր գու կը սրփուես մեր անցած շաւղին վերայ . միւսն , որ անդ կը ննջէ խաղաղիկ իւր հօր շիրմին վերայ , ո՞ն , ի՞նչ արդեօք պիտի պատահի նմա :

Ինչպէս ամենուն , նոյնպէս եւ նմա պիտի պատահին վիշտք եւ տուայտանք , յողնութիւնք , անհնարին անուրջք , երկարատեւ դառնութիւնք , անհնարուոր իրաց համար անսանձ փափաքանք , եւ ո՞ գիտէ թէ օր մի մայրիկը պատմէ իրեն թէ ննջած է նա իւր հօր տապանաքարին վերայ , պիտի ցաւի թէ ննջեցեալն իւր սառնասառոյց անկողնէն չէ ելած եւ զնա ընդ իւր չէ տարած իւր բնական անձանօթ աշխարհներն :

Արթնցաւ մանկիկը , մայրիկը դրկեց զնա գորովազին եւ գլխովն իւր հրաժարական ողջոյնն ինձ տալէ յետոյ , հեռացաւ գնաց : Ընդ երկար իւր ետեւէն նայեցայ ակնապիշ , որ վերջապէս անհետ եղաւ նոճեաց ետեւ , որոց մէջէն կը տեսնէի

իւր կանաչադոյն երկայն կրկնոցն , որ իւր ետեւէն կ'աւելբ
նրբուղւոյն փոշին :

Թարգմ. Կոմիտաս Ա. Ոսկեան

Մարտիմ տիւ Գան

ՈՒՂՂԵԼԻՔ

Էջ	Տող	
26	25	Կարգա՝ Մաքսնտոկայ կայսեր՝ որ կոոց ջերմ եւն.
27	8	» եւ Սուրբն Պետրոս՝ Մեծին Բարսղի եղ- բայրը եւն.
»	13	» վարդապետութիւն եւն.
28	27	» Աստի իւր հետ եւն.
30	3	» առ այն սուրբն եւն.
»	19	» Պտաքթոն եւն.
37	10	» Բապր եւն.
»	21	» լուծումն եւ մէն մի եւն.
38	14	» Այսրլայթեան եւն.
39	14	» ռիւերիմ եւ անհաչտ եւն.
»	18	» Գարբաթա եւն.



ՊԱՏԿԵՐ տասն և հինգ օրը մի անգամ կը հրատարակուի:

Բաժանորդագրութեան տարեկան գինն է
Կ. Պօլսոյ համար 40 դանեկան
Գաւառաց և օտար երկիրներու համար
բոլորատարի ծախքն ի միասին հաշուելով 50 « «

Իշխարանցիւր թիւ 2 դահեկան

ՊԱՏԿԵՐԻ խմբագրատունն է ի Բերա, Եւչի փողոց
Թիւ 1, ուր պետք է դիմել բաժանորդագրութեան և քերթին
վերաբերեալ այլ ամենայն խնդրոց համար :

RÉDACTION DU **BADGUERE**

Constantinople, Péra, rue YÉCHIL N^o 1

معرف نظارت جلیه سنک رخصتیه طبع اولتمشدر